

ՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԵՏՔԸ

Աւարտութեան իրախնայութեանց ու ծախահարութիւններու շարք մը ապրիցանք:

Հանդիսաւոր Ազգային Ժողով, հանդիսաւոր Արարողութիւն Մայր եկեղեցիին մէջ, երգ, նուագ ու բանաստեղծութիւն ամէն կողմ, Կ. Պոլսոյ գրեթէ ամբողջ հայութիւնը հեւ ի հեւ ոգեւորութեան ու խանդավառութեան մէջ պահեցին ուրբաթէն մինչև կիրակի գիշեր:

Հիմա որ Երեւեանական հանդէսները ընցան ու հանդարտութիւնն իսկ գտանք, ժամանակ է որ ինքնամփոփութիւնք և տեսնենք թէ այդ մեծաշունչ իրարանցումներէն ի՞նչ տեսական բան մնացած է մեզի:

Երբ այսպիսի հաշուեյարդարութեան մը կը զիմնեք՝ ուրախ լի է որ մեր դէն ու շահի հաշիւը զրոյով մը փակելու հարկին մէջ չենք գրտնուիր և պիտի կրնանք շահի երեսին մէջ մեծկակ բան մը արձանագրել: Ատիկա ուրբաթի Ազգային Ժողովոյ հանդիսաւոր նիստին մէջ ծախահարութիւններով ու միաձայնութեամբ նուիրագործուած սկզբունքն է, այսինքն կողք՝ ուղղուած Հայ կաթողիկոս Հայ Բողոքական հասարակութիւններուն, գալ միանալու մեզի հետ: Այդ միութեան առաջին ու միակ պայմանն է խղճի ազատութիւնը:

«Ազգային Ժողովը յայտարարելով որ իւրաքանչիւր ամէն Հայ քաղաքացի, առանց կրօնական խտրութեան, կրնայ լիապէս օգտուիլ Ազգային Սահմանադրութեան իրաւունքներէն պահպանելով հանդերձ իր խղճի կատարեալ ազատութիւնը՝ ըստ իր դատարարութեան, կոչ կ'ուղղէ Հայ ազգի բոլոր յարանուանութիւններուն՝ որ ընդունելով օրուան ազգային այս մեծ տօնը որպէս խորհրդանշան դէպի Համագրային Միաբանութիւնը առաջնորդող նուիրական գաղափարին, փութան համախմբուիլ սահմանադրութեամբ նուիրագործուած մեր ներքին ինքնավարութեան շուրջ, միացեալ ուժերով բեղմնաւորելու համար այն պատմական դերը որուն սահմանուած է Հայ Ժողովուրդը իր քաղաքակրթական կոչումին մէջ:»

Այս հանդիսաւոր կոչին անմիջական արդիւնքը եղաւ, ինչպէս յայտնի է, այդ հիմնական սկզբունքին վրայ միութեան առաջարկ մը մեր և Հայ Բողոքական եղբայրներու միջև, զոր Ազգային Ժողովը նոյնպէս իր քուէովը վաւերացուց:

Հիմա, երկու կողմէն ընտրուած պաշտօնական մարմիններ պիտի աշխատին՝ բնականաբար՝ գործնական հողի վրայ դնելու այս տրուած որոշումները և ապահով կրնանք ըլլալ որ յաջող աղբիւրքի մը պիտի յանգին:

Ուրբաթ օր տեղի ունեցած այս պատմական դէպքը մեծ խանդավառութիւն մը յառաջ բերած է ո՛չ միայն մեր և Բողոքական եղբայրներուն, այլ նաև կաթողիկոս եղբայրներուն մէջ: Իրենցմէ շատեր այժմ փափաք կը յայտնեն միեւնոյն պայմաններով միանալու մեզի, ժանաւանդ որ իրենք շատ աւելի ուժեղ պատճառներ ունին իրենց վրայէն թօթափելու Սաքըզ Աղաճիի Պատրիարքարանին անտանելի ու բռնաւոր լուծը:

Հայ կաթողիկոս հասարակութեան պատկանող ծանօթ անձնաւորութիւն մը որ պաշտօնական հանգամանք ալ կը կրէ, իբրև երեւելիներու ժողովին անդամ, ինձ կը յայտարարէր.

— Մեր միութիւնը ձեզի հետ շատ աւելի զիւրին կրնայ զլուխ ելլել քան՝ Բողոքականներունը:

— Ինչպէ՞ս, հարցուցի զարմացած:

— Որովհետև մենք կաթողիկոսներու և խտր չենք դնել ու չենք կրնար դնել Հայ-կաթողիկոս և լատինա-

կան եկեղեցիներուն միջև: Երբմէն հետէ Թերզեան Գեղարայոյժառն պատճառաւ ձայնաւոր պատարազը դադարած է մեր եկեղեցիներուն մէջ, մեր հաւատացեալները, ընդհանրապէս պառաւ կիներ, լատին եկեղեցիները կը յաճախեն: Այդ, այն օրն ուր աշխարհիկ տեսակէտով միութիւնը կատարուի մեր և Լուսաւորչ, Հայերուն միջև, մեր կեանքը ու է փոփոխուելու չպիտի կրէ, քանի որ կրօնականի համար մեր բոլոր պէտքերը պատրաստ պիտի դնենք, նոյնիսկ եթէ Հայ կաթողիկոս եկեղեցիները զոյութիւն չունենան: Պիտի կրնանք ձեզի հետ իբրև Հայ ազգի և լատին եկեղեցիին մէջ իբրև կաթողիկոս աղօթի, պատկուիլ, մկրտուիլ ու թաղուիլ:

— Բայց ձեր կաթողիկոս-Պատրիարքը և վարդապետները ի՞նչ պիտի ըլլան այն ատեն:

— Ինչ որ կ'ուզեն ըլլան, թո՛ղ իրենց գլխուն ճարը նային: Արդէն մեր Եկեղեցականները բնո մըն են Վատիկանի վրայ և Վատիկան չա՛տ հաշտ աչքով պիտի նայի այդպիսի կարգադրութեան մը:

— Սակայն կրնաք մեզի հետ միանալով հանդերձ պահել ձեր եկեղեցիները:

— Անշուշտ, բայց ի՞նչ հարկ աւելորդ ծախքերու, քանի որ ձեռքի տակ պատրաստ ունինք Լատինական եկեղեցիները որոնք հարուստ են և մեր գրաթիւն չեն կարօտիր: Իսկ Հայ Բողոքականները նոյն վիճակին չէլ չեն, օտար ժողովարաններ չի կան պէտք եղած թիւով և ստիպուած են իրենց ուրոյն աղբթատեղիներն ու հովիւները ունենալու:

Այսպէս խօսեցաւ ինձի Հայ կաթողիկոս անձնաւորութիւնը և նկատեցի որ իրաւունք ունէր:

Տրամադրութիւնները լաւ են և պէտք է օգտուիլ անոնցմէ: Այժմէն իսկ պէտք է աշխատիլ այս բաղձալի միութիւնը ի կատար հանելու: Մեր կողմէ անկեղծ քալ մը թերեւս լաւագոյն միջոցն է գործին յաջողութեան:

ԵՐՈՒՍԵՆԻ ՕՏԵՍԸ

ՇԱՌԱԹ ՄԸ
ՌՈՒՄԱՆՈՑ ՄԷՋ
ՊՈԼՍԵՑԻ
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ
ՊՋՏԻԿ ԿԱՐԱՒԱՆԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱՑՄԵՆ ԳԱՂԱՔԱԿԱՆ
Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն
ՆՕԹԵՐ, ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՈՒ ԵՈՐՁԻՆԻՍՏՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հակառակ ծովին ալեկոծութեան և շոգենաւին տատանումներուն, քանի մը ուղեւորներ, կամրջակին վրայ յամառօրէն կեցած, կը զիտինք վասփորի նեղուցէն գուրս Սև Մովուն Բ՝ մէլի ի եղբերք:

Մէկը՝ քովս կեցող երկու Հայերէն, որոնք հետ անմիջապէս ուղեւորներու սովորական ծանօթութիւն մը հաստատած էի, ռաշմաղլտական հարց մը յուզեց ըսելով.

— Կը տեսնեմ որ Պոլսը՝ Սև ծովի կողմէն թնամիլի մը յարձակումին դէմ ըստ բաւականին պաշտպանութեան է: Վարդերի բերանը շինուած մարտկոցներով և հոն զետեղուած թնդանօթներով: Բայց, հնար չէ որ թնամի բանակ մը նեղուցէն դուրս, սա՛ լքուած տեղերը զինուոր ցամաք հանէ և հոնկէ յանկարծ Պոլսու վրայ յարձակի:

Խօսակցիս յայտնած այս կարծիքը առաջին անգամը չէր որ կ'ըսէի: Ետտեքու գիտին բան մը կ'երևայատարանկ ձեռնարկ մը: Եւ նոյնիսկ